


ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԸ (նվիրվում է ՀՀ ԳԱԱ աղագեմիկոս Սերգեյ Սարինյանին), Հոդվածների ժողովածու, Ե., «Լուսակն» հրատ., 2014, 112 էջ:



Նշանավոր գրականագետ Սերգեյ Սարինյանի 90-ամյա հոբելյանի կապակցությամբ և այն շնորհավորելու ջերմ ցանկությամբ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հրատարակել է հոդվածների ժողովածու, որում ներկայացվում են «ՀՀ ԳԱԱ աղագեմիկոս Սերգեյ Սարինյանի գիտական հսկայական վաստակի մի քանի խնդիրները»: Ժողովածուն օգտակար է այնու, որ հստակ ներկայացնում է, թե Ս. Սարինյանի մենագրությունները, հոդվածները, բազմաթիվ գրքերի առաջաբանները կիրառական ինչ նշանակություն ունեն, որքանով են նպաստում դպրոցական կյանքում ազգային գրականության ճիշտ, նպատակային ու հիմնավոր ուսուցմանը և կարևորագույն ինչ դեր են կատարում բուհերում գրականագետ ու բանասեր որակյալ կադրերի պատրաստման գործընթացում:

Ժողովածուն ունի նախաբան՝ հայերեն ու անգլերեն, և բաղկացած է վեց հոդվածից: Առաջին երկուսի հեղինակը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանն է, որը «Դասական գրականագետը» դիմանկարային էսսեում համակողմանի ներկայացնում է գիտնականի կյանքն ու գործը՝ կարևորագույն նվաճումների դիպուկ բնութագրականով: Երկրորդ հոդվածը նվիրված է Ս. Սարինյանի «Շարունակվող լեզուն» գրքին, որը յուրօրինակ ասք է՝ ձոնված տաղանդավոր գրող և լրագրող, խիզախ ճանապարհորդ, քաղաքական գործիչ ու հրապարակախոս Ջորի Բալայանին: Սարինյանն իր գրքում փաստում է հայ գրողի հեռատեսությունը, «շեշտադրում է Ջորի Բալայանի ահագնագր՝ մարդկությանը պանթուրքիզմի ահագնացող վտանգից զերծ պահելու մտահոգությունը, որը չկանխելու դեպքում կարող են լինել ողբերգական հետևանքներ» (էջ 32): Խոսելով Ջ. Բալայանի շարունակական ահագնագի՝ պանթուրքիզմը ֆաշիզմի տարբերակը լինելու մասին, Ս. Սարինյանը հիշեցնում է Բաֆֆու մարգարեական կանխատեսությունը «քաղաքակիրթ թուրքի» ապագայի վերաբերյալ. «Այդ ցնորք է. թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավագակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա» (էջ 35): Հիրավի, առավել կրթված երիտթուրքերը Աբդուլ Համիդին գերազանցեցին իրենց հրեշավոր ծրագիրն իրագործելով՝ 1915-ին մեկուկես միլիոն անմեղ հայերին նահատակեցին, կարճ ժամանակահատվածում հայաթափեցին հազարամյակների կյանք ունեցող մեր պապենական հայրենիքը: Հոդվածում պատկերված են Ջ. Բալայանի ճամփորդությունների էական հանգույցները, որոնց միջոցով նա միջազգային հանրության ուշադրությունը սևեռում է Հայաստանի պետականության փաստական իրողության և իր ժողովրդի քաղաքակրթության հարատև-վումը ցուցադրելու իրողությունների վրա:

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Լիլիթ Հովսեփյանի «Պատմական խնդիրները Լևոն Շանթի դրամաներում՝ ըստ Սերգեյ Սարինյանի» հոդվածը երևան է հանում հայ ժողովրդի պատմության խոր իմացությունը Ս. Սարինյանի «Լևոն Շանթ» գրքում, որն իր մեծածավալ ընդգրկումով նորություն էր հայ գրականագիտության պատմության մեջ: Սարինյանն իրականացրեց Նիկոլ Աղբալյանի երազանքը՝ տեսնել Շանթ գրողի ստեղծագործությունների խորագիտական վերլուծությունը: Լ. Հովսեփյանը գրում է. «Պատմական դրամաների վերլուծության մեջ Սարինյանը որդեգրում է արմատապես հակառակ մոտեցում (խոսքը դրանց ազգային և պատմական բովանդակություն հաղորդելու մասին է - Ջ.Ա.). «Ես վերանայում եմ այս տեսակետը, միանգամայն որոշակիորեն գիտակցելով ոչ միայն Շանթի կապը ազգային գրականության ավանդներին, այլև նրա իդեալների խորապես ազգային և իրապես պատմական բովանդակությունը» (էջ 45): Հոդվածագիրը շեշտում է, թե Ս. Սարինյանի բացատրություններն արդիական են և ուսանելի հենց այսօր և ներկայիս հրամայականն են: Լ. Հովսեփյանը հոդվածին կցել է «Սերգեյ Սարինյանի դասերը» խորագրով մի հավելված, որում զետեղված են գրականագետի մաքսիմները, օրինակ. «Մեղքը անխուսափելի է այնտեղ, ուր չկա կատարյալ ու իսկական բարձր մարդը» (էջ 67):

«Գրաքննադատ Բաֆֆին ըստ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի» հոդվածի հեղինակը՝ բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Պարույր Սահակյանը, փաստում է, թե ինչ հմտությամբ է Ս. Սարինյանն առաջինը հայ գրաքննադատության մեջ ծավալուն մենագրություն նվիրել Բաֆֆուն՝ մի գրողի, որի երկերը տևական ժամանակ արգելված էին խորհրդային գաղափարախոսության արգելափակումով:

1883 թվականին Բաֆֆին «Փալստոս» ստորագրությամբ, իսկական գրաքննադատին վայել գիտելիքներով ու դիպուկ տրամաբանությամբ «Մշակի» յոթ համարներում պատասխան է գրում «Կայծեր» վեպն անհիմն ու միտումնավոր քննադատած Սարգիս Հայկունուն: Բաֆֆու պատասխանի մեջ Ս. Սարինյանը շեշտում է մի կարևոր խնդիր. քննադատը պետք է հաշվի առնի ժամանակի պահանջը և նոր միայն քննադատի երկը: «Կայծերը» գրվել է հայ կյանքի ժամանակի պահանջով և ճշմարտացի գիրք է:

Հոդվածում անդրադարձ կա նաև պատմավեպի բաֆֆիական տեսությանը, որն ըստ Ս. Սարինյանի, պայմանավորված էր հայ գրականության զարգացման օրինաչափությամբ: Ժողովածուի վերջին երկու հոդվածները ուշագրավ են նրանով, որ ներկայացնում են ակադեմիկոս Սարինյանի մենագրությունների կարևորությունը ավագ դպրոցի ուսուցիչների համար: Դրանք որոշակիորեն ունեն հայ գրականությունը դպրոցում դասավանդելու մեթոդական կտրվածք ու ձևաչափ:

Մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ Ռուզան Դոլուխանյանը գրել է «Պատմության փիլիսոփայությունն ըստ Մուրադյանի «Ռուզան» պատմական դրամայի» սարինյանական մեկնաբանությունների մասին: Նա նկատում է, թե որքան կարևոր է այս դրամայի ճիշտ մատուցումը, ըստ Ս. Սարինյանի «Մուրադյան» գրքի, որի միջոցով աշակերտը ծանոթանում է ոչ միայն դրամայի ժանրին, այլև յուրացնում է կլասիցիզմ ու ռոմանտիզմ գրական մեթոդներին բնորոշ գծերը: «Ս. Սարինյանը ճշգրիտ բնութագրում է այն գրական մեթոդը, որով շարադրվել է «Ռուզան» դրաման. «Իր կառուցվածքով «Ռուզան» դրաման կլասիցիզմի և ռոմանտիզմի մի ուրույն ներհյուսում է, իհարկե, ռոմանտիզմի տիրական շեշտով» (էջ 93–94): Որքան տեղին է Սարինյանը Ռուզանի անձնագոհությունը գուգահեռում «Մասունցի Դավիթ» էպոսի Սասնա ղյուղագուներին

նախամոր՝ հայոց Գագիկ թագավորի գեղանի դստեր՝ Մովինարի ինքնագոհաբերման հետ, որի նպատակն էր սեփական կյանքի գնով փրկել հայրենի ժողովրդին ոչնչացումից: Հռովմածում Ռ. Դոլուխանյանը ուշադրություն է հրավիրում Ս. Մարինյանի հետևյալ մեծարժեք եզրահանգման վրա. «Պատմության դրաման այն սկիզբն է, ուր ստուգվում են մարդկանց բարոյական արժեքները» (էջ 90):

Մանկավարժական գիտ. թեկնածու Գայանե Մարդյանն իր հռովմածում («Մամվել» պատմավեպի ուսուցումը սարինյանական մեկնություններով) տեսանելի է դարձնում, թե այսօրվա ուսուցիչն ավագ դպրոցում ինչ շահեկան մեթոդներ կարող է քաղել Ս. Մարինյանի՝ «Մամվել» պատմավեպը գրականագիտորեն վերլուծող երկու գրքերի համապատասխան հատվածներից: Նա հիշեցնում է, թե ինչու գրականագետը Բաֆֆու կենսագրությունը շարադրելիս հատուկ տեղ է հատկացնում «Մովակ» բանաստեղծությանը, որը XIX դ. 50–60-ական թվականների ազգային-ռոմանտիկական պոեզիայի արտահայտությունն էր և իր հուզիչ, հայրենասիրական պաթոսով լայն արձագանք է գտել ժամանակին: Մարինյանը Բաֆֆու հայտնությունը հայ գրականության մեջ համարում է մարգարեական. «Նա աշխարհ եկավ ինչ-որ հավաքական անհրաժեշտությունից» (էջ 111):

Ուրախալի է, որ ժողովածուում հանդես են գալիս երիտասարդ գրականագետներ, որոնք այսօրվա դիտակետից օրինակելի գնահատականներ են տալիս բազմալսատակ գիտնականի երկերին և իրենց թարմ մոտեցումներով հաստատում են այդ գործերի մնայուն արժեքը:

**ԶԱՔԱՐՅԱՆ Ա. Հ.**

Բանասիրական գիտությունների դոկտոր